



«ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ
ԶԱՌԻԹԱՓԻ
ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊՈԱԿ-Ի 2023-2028 ԹԹ.
ԶԱՐԳԱՅՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Ֆեյսբուքյան անձնական կայք

<https://www.facebook.com/groups/zaritapshcool>

Նախաբան

Հայաստանի անկախացումից հետո կրթությունը կարևորագույն գործոն է ինչպես ազգային անվտանգության ապահովման, այնպես էլ հասարակական և համայնքային բարեփոխումների իրականացման, գիտելիքահեն տնտեսության ստեղծման տեսանկյունից:

Կրթության ոլորտի, մասնավորապես հանրակրթական դպրոցներում իրականացվող բարեփոխումները պետք է միտված լինեն արդյունավետ և միջազգային կրթական փորձի լավագույն չափանիշներին համապատասխան կրթական համակարգի ձևավորմանը:

Տեխնոլոգիական և նորարարական արագ զարգացող աշխարհին զուգահեռ ընթացք ապահովելու համար անհրաժեշտ քայլերից է հանրակրթական դպրոցների համապատասխան մոտեցումների որդեգրումն ու իրականացումը:

Ժամանակակից և ժողովրդավար յուրաքանչյուր հասարակություն անհնար է պատկերացնել առանց անհատների, ովքեր զինված են քննադատական մտածողության կոմպետենցիայով, փնտրում և գտնում են լուծումներ գիտական, տեխնիկական և սոցիալական խնդիրներին, ինչպես նաև ակտիվ մասնակցում են հանրային տարբեր քննարկումներին և պատրաստ են կառուցողական փոխզիջման:

Ցանկացած կրթական համակարգ պետք է համախափ կրթական գործընթացի բոլոր մասնակիցների (ուսուցիչներ, ծնողներ, աշակերտներ) ներուժը և ստեղծի նրանց միջև արդյունավետ համագործակցություն ինչպես դպրոցի, համայնքի, այնպես էլ՝ ազգային մակարդակում:

<<Զառիթափի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. Զարգացման ծրագրի հիմքում ընկած են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով հաստատված ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման պահանջները և ձևաչափը <https://www.arlis.am/documentview.aspx?docid=168835> և զարգացման ծրագրի փորձաքննության չափանիշները, որոնք հաստատվել են ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023թ. ապրիլի 18-ի N 399-Ա հրամանով:

<https://escs.am/files/files/2023-04-26/9ff191eceab2fd0dd09f14fdbd406b88.pdf>

Հիմք ընդունելով այս փաստաթղթերը, դպրոցում իրականացվող ներքին և արտաքին գնահատման հաշվետվությունները, մանկավարժական կոլեկտիվի, սովորողների ձեռքբերումները, համայնքի կարիքները և դպրոցում առկա հիմնախնդիրները, կազմվել է «Զատիթափի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագիրը.

- ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքը
- ✓ «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի օրինակելի կանոնադրություն
- ✓ Հանրակրթության պետական չափորոշիչ (ՀՊԶ)
- ✓ Հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը
- ✓ Հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգ
- ✓ «Սահմանադրություն»,
- ✓ «Կրթության մասին» օրենք
- ✓ «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին» օրենք
- ✓ «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք,
- ✓ այլ օրենքներով և դրանցից բխող ենթաօրենսդրական ակտերով,

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍԽԵՄԱՆ

1. Հաստատության գործունեությունը
2. Իրավիճակի վերլուծությունը, ուժեղ և թույլ կողմեր
3. Նպատակների և խնդիրների սահմանում
4. Սահմանված նպատակների և խնդիրների իրականացումն ապահովող գործողությունների և միջոցառումների ժամանակացույցը
5. Պատասխանատուները
6. Արդյունքների գնահատման չափանիշները
7. Ռիսկերը
8. Գործընթացի կազմակերպման անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները:
9. Վերահսկողության մեխանիզմները

1. Հաստատության գործունեությունը

Դպրոցի գործունեության առարկան յուրաքանչյուր սովորողի կրթության կազմակերպումն է՝ հանրակրթական հիմնական և լրացուցիչ ծրագրեր իրականացնելու միջոցով:

Դպրոցի գործունեության նպատակը յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշով սահմանված արդյունքների ապահովումն է:

Դպրոցի գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:

Դպրոցի առաքելությունը

- ✓ Բարենպաստ կրթական միջավայրի ապահովում յուրաքանչյուր սովորողի համար
- ✓ Հոգևոր-մշակութային բարձր արժեքների ուսուցանում
- ✓ Հայրենասիրական դաստիարակության պատշաճ կազմակերպում
- ✓ Ուսման բարձր որակի ապահովում, արդյունավետ և արդիական կրթության իրականացում:
- ✓ Յուրաքանչյուր շահառուի կյանքում առավելագույնս ազդեցություն ունենալ՝ սկսած ֆունկցիոնալ գրագիտությունից մինչև հնարավորությունների բացահայտում, գիտելիքի արժևորում և կիրառում, անհրաժեշտ կարողունակությունների ձևավորում
- ✓ Չափորոշային պահանջներին համապատասխան կրթության ձևավորում
- ✓ Բազմակարծիք, ներառական, մասնակցային արժեքային միջավայրի ապահովում

Դպրոցի տեսլականն է գտնվել անընդհատ ինքնակատարելագործման գործընթացի մեջ:

Եթե երեխային սովորեցնենք այսօր այնպես, ինչպես երեկ, ապա կգողանանք նրա վաղվա օրը:

Ջ. Դյուի



Դպրոցի մասին տեղեկություններ

Զառիթափի միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, հանրակրթական տարրական, հիմնական և միջնակարգ ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

Զառիթափի միջնակարգ դպրոցը կառուցվել է 1988թ.: Տարիների ընթացքում ձեռք է բերել և շարունակում է պահպանել բարձր հեղինակություն հասարակության լայն շրջանում, ունի բավարար ռեսուրսներ որակյալ կրթություն ապահովելու համար:

Դպրոցում աշխատում են 37 հոգի, որից 23-ը մանկավարժական աշխատողներ են, 3-ը՝ վարչական:

Մանկավարժներից բոլորը ունեն բարձրագույն կրթություն:

Դպրոցն ունի հոգեբան, ուսուցչի օգնական, հատուկ մանկավարժ:

Մայիս-հունիս ամսին բոլոր ուսուցիչները անցել են նոր ՀՊԶ-ի ներդրման վերապատրաստումները:

Ունենք 4 վերապատրաստող ուսուցիչ՝

2 ուսուցիչ, որոնք նաև մեթոդավարման նախագահներն են, իրականացրել են ՀՊԶ-ի ներդրման վերապատրաստումներ Զառիթափի և հարակից գյուղերի բոլոր ուսուցիչների հետ:

1 ուսուցիչ նախագծային ուսումնառության վերապատրաստող է, հաղթահարել է կամավորատեստավորման 88 տոկոսի շեմը և ստանում է համապատասխան հավելավճար, պատրաստվում է ստանալ տարակարգ:

1 ուսուցիչ բազմաթիվ վերապատրաստումների վերապատրաստող է՝ Էլեկտրոնային կրթական ռեսուրսների, <<Մեկ երեխա-մեկ համակարգիչ>> ծրագրի, <<Ֆինանսական կրթությունը դպրոցում>> ծրագրի, նաև դասագրքաստեղծ խմբի անդամ է, ունի առաջին կարգի տարակարգ:

Դպրոցը արդեն երկար ժամանակ չունի ֆիզիկայի մասնագետ, որոշ ժամանակ առարկան դասավանդվել է մենթոր ուսուցիչների կողմից, սակայն այժմ ունենք մասնագետի կարիք:

Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝

- մանկավարժական խորհուրդ՝ ընդգրկված են բոլոր մանկավարժական աշխատողները
- աշակերտական խորհուրդ՝ ընդգրկված են 6 -12-րդ դասարաններից երկուական սովորող
- ծնողական խորհուրդ՝ ընդգրկված են դպրոցի 1-12-րդ դասարանների ծնողական խորհուրդների նախագահները:
- մեթոդական միավորումներ՝ բնագիտական, հումանիտար և տարրական մեթոդավարումներ

Համաձայն ՀՀ ԿԳ նախարարի 05 նոյեմբերի 2012թ. N 1001-Ա/Ք հրամանով Տարրական հանրակրթական ծրագրով գործունեության ՍԵՐԻԱ Ա N 0887 լիցենզիայի, Հիմնական հանրակրթական ծրագրով գործունեության ՍԵՐԻԱ Ա N 0880 լիցենզիայի,

Միջնակարգ հանրակրթական ծրագրով գործունեության ՍԵՐԻԱ Ա N 0724 լիցենզիայի,
Դպրոցն իրավունք ունի իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- տարրական հանրակրթական-100 սահմանային տեղ
- հիմնական հանրակրթական-150 սահմանային տեղ
- միջնակարգ հանրակրթական-100 սահմանային տեղ

Ընդհանուր 350 սահմանային տեղ

Այս պահին դպրոցում սովորում է 191 աշակերտ՝ ընդգրկված 12 դասարաններում:

- Տարրական դպրոց-66 աշակերտ
- Հիմնական դպրոց- 89 աշակերտ,
- Միջնակարգ դպրոց-36 աշակերտ:

Դպրոցը միահերթ է, աշխատանքային շաբաթը՝ հնգօրյա:

Դպրոցն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «ՀՀ Սահամնադրությամբ», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքներով», այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ:

Դպրոցը՝ որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Դպրոցն իր անունից կարող է ձեռք բերել ու իրականացնել գույքային անձնական ոչ գույքային իրավունքներ, պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Դպրոցը ունի ՀՀ զինանշանի և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, ձևաթղթեր:

Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և գանձապետական հաշիվ:

Դպրոցն ունի պաշտոնական կայք:

zaritap@schools.am



2.Իրավիճակի վերլուծություն, ուժեղ և թույլ կողմեր

- ա. Հաստատության շենքային պայմաններ
- բ. Հաստատության նյութատեխնիկական բազա
- դ. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմիններ
- ե. Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
- զ. Հաստատության ուսումնական միջավայր
- է. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովող միջոցառումները
- ը. Հաստատության տրամադրած կրթության որակը
 - թ. Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները
- ժ. Հաստատությունում առկա հիմնախնդիրները

ա. Հաստատության շենքային պայմաններ

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
ա. Դպրոցի շենքային պայմանները	
Դպրոցն ունի 1. ուսումնական հաստատության տարածքը ցանկապատված է և անվտանգ է սովորողների ազատ տեղաշարժման համար 2. ուսումնական հաստատությունն ունի տարածք՝ մեկուսացված ու հեռացված ավտոճանապարհային գոտուց, աղմուկի, օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող օբյեկտներից 3. արտակարգ իրավիճակներում հատուկ ծառայությունների մեքենաները կարող են անարգել մոտենալ ուսումնական հաստատության շենքին 4. ուսումնական հաստատության շենքը վերանորոգված է, 5. ուսումնական հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին, 6. շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր, 7. շենքը հարմարեցված է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին (թեք	Դպրոցը կարիք ունի 2. օդի աղտոտման աղբյուրներ հանդիսացող աղբամանները պետք է փոխարինվեն աղբի տեսակավորման համար նախատեսված աղբամաններով՝ աշակերտների ներկայացրած նախագծային աշխատանքի արդյունքում 4. ուսումնական հաստատության շենքը կարիք ունի մասնակի վերանորոգման 7. ԿԱՊԿ ունեցող սովորողների համար նախատեսված սանհանգույցը գործաձական չէ

հարթակներ, լայն դռներ և այլն), 8. ուսումնական հաստատությունն ապահովված է սարքին վիճակում գտնվող հակահրդեհային անվտանգության լրակազմով, տանիքը պատված է հրակայուն նյութերով 9. ուսումնական հաստատության սովորողները «Ֆիզկուլտուրա» առարկայի ուսումնական դասընթացներն անցկացնում են մարզադահլիճում և բացօթյա մինի ֆուտբոլի դաշտում 10. ուսումնական հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով 11. ուսումնական հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով 12. ուսումնական հաստատության մի մասնաշենքի երկու հարկերում առկա են առանձնացված վերանորոգված սանհանգույցներ՝ տղաների և աղջիկների համար 13. ուսումնական հաստատությունում առկա է ճաշարան, որը համապատասխանում է սանիտարահիգիենիկ պայմաններին, 14. ուսումնական հաստատությունն ունի գործող գրադարան 15. ուսումնական հաստատությունն ունի ռազմագիտության, համակարգչային կաբինետներ, ինչպես նաև արհեստանոց, միջոցառումների անցկացման դահլիճ, ներառական կրթության, ֆրանսերենի, շախմատի դասասենյակ, որոնք մասամբ ապահովված են անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնանյութական և ուսումնաղիդակտիկ նյութերով	8. տանիքը ունի մասնակի վերանորոգման կարիք 9. Մարզադահլիճը և հանդերձարանները կարիք ունեն վերանորոգման և համապատասխան գույքի ձեռքբերման 11. ամռան սեզոնին լինում է ջրամատակարարման խնդիր 12. շենքի մյուս թևի սանհանգույցները չեն գործում 15. ուսումնական հաստատությունը չունի ուսումնական լաբորատորիաներ ու կաբինետներ, այդ թվում՝ քիմիայի, ֆիզիկայի, կենսաբանության, աշխարհագրության և այլ հատուկ ուսումնական դասասենյակներ (սենյակներ), այդ թվում՝ արտադպրոցական կրթության և լրացուցիչ կրթական ծրագրերի համար (լուսանկարչական
---	--

16.Ապաստարան-նկուղ	խմբակ, նկարչական խմբակ, երաժշտական խմբակ և այլն) հազեցած անհրաժեշտ գույքով, ուսումնական պարագաներով, ուսումնականության և ուսումնադիպակտիկ նյութերով. 16. Ապաստարան-նկուղը ունի առաջնահերթ վերանորոգման կարիք 13.ուսումնական հաստատությունում առկա չէ բուժկետ, որտեղ կարող է տրամադրվել առաջին բուժօգնություն 14. դպրոցը ունի կանաչ բացօթյա դասարանի կարիք 15.դպրոցն ունի առանձին ընթերցասրահի կարիք՝ ապահովված ժամանակակից գրականությամբ և տեխնիկական միջոցներով
---------------------------	---

Բ.Նյութատեխնիկական բազա	
1. Դասասենյակները կահավորված են նստարաններով 2. Համակարգչային կաբինետն ապահովված է 12 համակարգիչներով, 2 տպիչ սարքով, 1 պրոեկտորով և 1 հեռուստացույցով: 3. Ճաշարանն ունի սառնարան, գազօջախ, ջրատաքացուցիչ, ապահովված է սեղաններով, աթոռներով, սպասքով, որտեղ տարրական դպրոցի աշակերտներին մատակարարվում է տաք սնունդ 4. <<Մեկ երեխա-մեկ համակարգիչ>> ծրագրի շրջանակներում նվեր-գրասալիկներ: 5. Կարի մեքենա,որն օգտագործվում է ձեռնարկատիրական կրթության շրջանակներում՝ ԱԳԸ-ի կողմից: 6. Գրադարանը հագեցված է գրքերով,գրադարակներով: 7. ՆԶՊ կաբինետ՝ կցված զենքով:	1.Նստարանները հնամաշ են, բազմակի վերանորոգված 2. Համակարգչային թերբեռնվածությունը խոչընդոտում է սովորողների և ուսուցիչների աշխատանքը 5.Տեխնոլոգիայի արհեստանոցը չունի համապատասխան սարքավորումներ 6.Գրադարանային ֆոնդը կարիք ունի թարմացման ժամանակակից գրականությամբ և տեխնիկայով Քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներում չկան համապատասխան սարքավորումներ և նյութեր: Մարզադահլիճը ունի մարզասարքերի պակաս: Սմարթ գրատախտակ: ԱՐՄԱԹ ինժեներական սարքավորումներ Ֆրանսերենի ռեսուրս կենտրոնը ունի գրականության և դիդակտիկ նյութերի պակաս:

Դ.Կառավարման և խորհրդակցական մարմիններ	
Ուժեղ 1. Դպրոցում գործում է կանոնադրության համաձայն ձևավորված կառավարման մարմինը՝ միացյալ խորհուրդը, որը իր լիազորությունների սահմանում իրականացնում է 1) հանրակրթական դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի կարգի հաստատումը 2) Բյուջեի նախագծի քննարկում մանկավարժական խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների հետ՝ առաջարկներ և պարզաբանումներ տալու նպատակով 3) Տնօրենի գործունեության նկատմամբ ընթացիկ վերահսկողություն 4) Տնօրենի ներկայացմամբ քննարկում է ամենամյա ծախսերի նախահաշիվը, հաջորդ տարվա բյուջեի նախագիծը, բյուջետային ֆինանսավորման հայտը, հաստիքացուցակը, տարիֆիկացիոն ցուցակները 5) Լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ ուսումնական հաստատության գործունեության բնագավառին, նպատակներին և խնդիրներին համապատասխան 6) Քննարկում է դպրոցական խորհրդի՝ տնօրենի նկատմամբ անվստահության վերաբերյալ առաջարկը և այն, իր դիրքորոշման հետ միասին, ներկայացնում է	Թույլ 1.Խորհրդի գործունեությունը պասիվ է, ոչ մասնակցային 2.Խորհուրդը բյուջետային պարտավորությունների կատարման նպատակով պետք է իրականացնի վերահսկողություն բյուջեի կազմման, քննարկման և կատարման գործընթացների նկատմամբ 3.պետք է մշակել վերահսկողության մեխանիզմներ 4.Հավանության են արժանացնում առանց ընթերցման, քննարկման և առաջարկություններ անելու

լիազորված մարմնի ղեկավարին 7) Դպրոցական խորհուրդը իրականացնում է դպրոցի զարգացման ծրագրի՝ վերահսկողությունը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: 8) Դպրոցի խորհուրդը իր խորհրդատվական աջակցությամբ, դպրոցի ֆինանսական ռեսուրսների ճիշտ ուղղորդմամբ և այլ աշխատանքներով աջակցում է տնօրենին դպրոցի զարգացման ծրագրի իրականացման փուլում իր կողմից սահմանված նպատակների իրականացման հարցում:	<i>խորհրդի ցանկությամբ կարող է ձևավորվել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ,</i>
2. Դպրոցի խորհրդակցական մարմիններն են՝ - մեթոդական միավորումներ՝ տարրական, բնագիտական և հումանիտար - մանկավարժական խորհուրդ՝ կազմված 23 անդամից - ծնողական խորհուրդ՝ կազմված 12 ծնողից, - աշակերտական խորհուրդ՝ 6-12-րդ դասարաններից 2 աշակերտ, որոնք զուգարում են նիստեր, քննարկում հարցեր, կայացնում որոշումներ	2. Այլ դպրոցների հետ կարելի է ստեղծել միջդպրոցական մեթոդական միավորումներ՝ փորձի փոխանակման նպատակով Որոշ ուսուցիչներ գերձանրաբեռնված են աշխատում, կան ոչ մասնագետ ուսուցիչներ

Ե. Համագործակցություն համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	
Ուժեղ կողմ 1. Կրթության կառավարման մարմինների հետ • ԿԳՄՄՆ • Վայոց ձորի մարզպետարան 1. Դպրոցը համագործակցում է • Վայքի համայնքապետարանի • Զառիթափի գյուղապետարանի հետ • Սովորողները իրականացնում են սոցիալական, նախագծային և հետազոտական աշխատանքներ, որին ակտիվ մասնակցում է նաև Զառիթափի գյուղապետը 2. Դպրոցը ԿԶՆԱԿ-ի հետ իրականացնում է • Նոր ՀՊԶ-ի ներդրման վերապատրաստումներ • <<Երիտասարդները հանուն կլիմայի բարեփոխման>> ծրագրի նախագծային ուսումնառություն 3. ԿՏԱԿ-ի հետ իրականացվում են • ՏՀՏ գործիքներով վերապատրաստումներ	Թույլ կողմ ԿԶՆԱԿ-ի կողմից իրականացվող <<Ընթերցանությունը տարրական դպրոցում>>ծրագրի բացակայություն

5.ԴՏՇՀ-ի հետ իրականացվել և իրականացվում են • Դասագրքաստեղծ ուսուցիչների վերապատրաստում • Դասագրքերի գնահատում 4. UNICEF-ի հետ փետրվար-մայիս ամիսներին իրականացվեց • <<Երիտասարդները հանուն կլիմայի բարեփոխման>> ծրագրի նախագծային ուսուցում,որը ունեցավ հանրային ներկայացում 6.Այբ դպրոցի հետ արդեն 3 տարի գործում է լայն համագործակցություն • <<Այբապատում>> ծրագրի շրջանակներում • Փոխադարձ այցելություններ կրթական և մշակութային նպատակներով 7.Վայք-Ինֆոտան հետ աշակերտները իրականացնում են • Սոցիալական նախագծեր • Հասարակական կյանքին ուղղված սոցիալական ծառայություններ 8.Հաճախակի այցելում ենք Եղեգնաձորի երկրագիտական թանգարան, որտեղ նույնպես իրականացվում են սոցիալական նախագծեր • Ազգային,պատմամշակութային համագործակցություն • Խթանում ենք արոնեմենտային	Դասագրքերի գնահատման գործընթացներում ուսուցիչների պասիվ մասնակցություն 6.Համագործակցային կապերը թույլ են Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների հետ կրթական նորարարություններին ծանոթանալու և կիրառելու նպատակով: Աշակերտական համակազմը օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել Հայաստանի և օտարերկրյա կրթական հաստատությունների սովորողների ինքնավարության մարմինների ու կազմակերպությունների հետ: • Դիլիջանի կենտրոնական դպրոց • Շիրակացու ճեմարան • Գլոբալ Բրիջ դպրոց • Մխիթար Սեբաստացի կրթահամալիր • Ռոստովի հայկական դպրոց • Շվեդիայի դպրոցներ Հնարավորության դեպքում կարելի է կազմակերպել հանդիպումներ, փոխադարձ այցելություններ կրթական և մշակութային ծրագրերի շրջանակներում
---	---

հանդիպումներ ունենում անչափահասների գծով տեսուչների հետ • ակոնհոլի, ծխախոտի, թմրամիջոցների և հոգեմետ նյութերի օգտագործման դեպքերը կանխարգելելու համար • սովորողների նկատմամբ բռնության, ֆիզիկական կամ հոգեբանական ճնշման դեպքերի /բուլինգ/ բացահայտման, դրանց մասին զեկուցման, դրանց կանխարգելման և հանրային քննարկման մեխանիզմներ մշակելու նպատակով	13.Ծնողների և աշակերտների շրջանում ուստիկանության աշխատակիցների հետ խուսափող հարաբերությունները թույլ չեն տալիս լիարժեք վեր հանելու ծագած խնդիրները՝ լուծում տալու նպատակով
12. ՀՀ Կենտրոնական բանկի աջակցությամբ կատարվել է • ֆինանսական կրթության ինտեգրումը որոշ առարկաների շրջանակներում և դպրոցում իրականացվում են ֆինանսական շաբաթ միջոցառումներ 13.Թումո կենտրոնում սովորող աշակերտները տիրապետում են • կրթական նորագույն տեխնոլոգիաներին	
14.Ուսուցիչները մասնակցում են համահայկական կրթական հարթակներում որպես խոսնակներ և մասնակիցներ • Պարադիգմա • Հայաստան-Սփյուռք • Կազա • EDU_ARMENIA • Իմ դպրոց • Քան ակադեմիա • Կրթադիտակ և այլն • ԴՇՏՀ	Ուսուցիչների մասնակցային մշակույթի պակաս

• Ինտերակտիվ Կրթության Հիմնադրամ 15.Դպրոցը համագործակցում է ՏՄԱԿ-ի հետ • ներառական կրթության և հավասարության ապահովման նպատակով ԿԱՊԿՈՒ աշակերտների հետ աշխատանքի կատարման նպատակով 16.Դպրոցը մշտապես մասնակցում է համապետական շաբաթօրյակներին 17. Դպրոցը համագործակցում է՝ ԱԻՆ-ի հետ: Իրականացվել են տարահանումներ, թաքստոցների և շշակների գործարկմամբ: Քննարկվել են արդյունքները , արվել են հետևություններ և արձանագրվել խնդիրներ: 18. Դպրոցը համագործակցում է Վայքի գորամասի հետ, ռազմահայրենասիրական դաստիարակության նպատակով կատարվում են հանդիպումներ ՆԶՊ առարկայի շրջանակներում 19.Սպորտային միջոցառումներից անցկացվում են մարզային սպորտլանդիաներ, ֆուտբոլի, վոլեյբոլի և բասկետբոլի մրցաշարեր, աշակերտները մասնակցել են նաև <<Վարչապետի գավաթ>> մրցավազքին, <<Սպորտային ընտանիք>> մրցույթին Համայնքային միջոցառումներում սովորողների, մանկավարժների և ծնողների ներգրավվածությունը ակտիվ է , մասնակցային	15.ԿԱՊԿՈՒ սովորողների ծնողները ունեն բացասական վերաբերմունք ՏՄԱԿ-ի գործունեության հանդեպ, որի համար կատարվում են բազմաձևալ աշխատանքներ 17.Դպրոցի ապաստարանը համարվում է գյուղի միակ ապաստարանը և գտնվում է անմխիթար վիճակում, ունի կապիտալ վերանորոգման կարիք:
--	--

Զ. Հաստատության ուսումնական միջավայր

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
1. Դպրոցն ունի դահլիճ՝ 200 տեղով, որտեղ անցկացվում են միջոցառումներ, հանդեսներ, համադպրոցական ծնողական ժողովներ, հանդիպումներ, քննարկումներ, վարագույրները ձեռք են բերվել ԱԳԸ –ան կողմից ձեռնարկատիրության դասի շրջանակներում 2. 6000 կտոր գրքից բաղկացած գրադարանը ամեն տարի համալրվում է որոշակի գրականությամբ, 3. համակարգչային դասարան, որտեղ անցկացվում են էլեկտրոնային և վիրտուալ դասեր, 4. 2022թ. - ին դպրոցի ֆրանսերենի նախկին ուսուցչուհի Թ. Խաչատրյանի որդիների ֆինանսական աջակցությամբ դպրոցի դասասենյակներից մեկը նորոգվել, կահավորվել և դարձել է ֆրանսերենի ռեսուրս- կենտրոն, որտեղ անցկացվում են բաց դասեր, քննարկումներ, հանրային ներկայացումներ, ժողովներ, հանդիպումներ 5. Դպրոցն ունի նախնական զինվորական պատրաստվածության	1. Դահլիճում նստատեղերը անհարմար են, կարիք ունեն վերափոխման, ցանկալի է ունենալ գունավոր լուսավորություն SMART գրատախտակների բացակայություն 2. Աշակերտական խորհուրդը զարգացման ծրագրի մեջ ներառելու համար առաջարկել է հատկապես ավարտական դասարանների սովորողների համար ստեղծել ժամանակակից գրականությամբ և տեխնիկայով զինված ընթերցասրահ Դպրոցը չունի նորագույն նյութատեխնիկական բազայով զինված առարկայական դասարաններ՝ որոնց բացակայությունը խոչընդոտում է կրթության որակի բարելավմանը, աշակերտների մոտիվացիային Բնագիտական լաբորատորիաների բացակայությունը (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, առարկաների համար առանձին դասասենյակներ) խոչընդոտում է բնագիտական առարկաների նկատմամբ սերը, այդ առարկաների դասերը անցնում են

կաբինետ, գենքի համար նախատեսված վանդակաճաղերով պահոց 6.Դպրոցն ունի շախմատի դասասենյակ, որտեղ անցկացվում են շախմատի օլիմպիադաներ 7.Դպրոցն ունի ներառական կրթության դասասենյակ 6. Դպրոցին կից գործում է արտադպրոցական մանկապատանեկան տուրիստական կենտրոն, աշակերտները սիրով հաճախում են և տուրիստական վրանային ճամբարներ կազմակերպում Ստեփանավանի և Դիլիջանի անտառներում, ինչպես նաև արշավներ են գնում Վայոց ձորի գեղատեսիլ վայրեր: 7.Աշակերտները մասնակցում են օլիմպիադաներին, տարբեր մրցույթներին՝ <<Կենգուրու>>, <<Մեղու>> 8.Մշակութային արժեքահամակարգի ձևավորմանը նպաստում է դպրոցի <<Փշոնք>> պարային համույթի գործունեությունը: Համույթի պարերը ներկայացվում են հանրապետության լավագույն բեմերում	անհետաքրքիր ԱՐՄԱԹ լաբորատորիայի սարքավորումներ, ռոբոտաշինության և ծրագրավորման խմբակների բացակայությունը նույնպես չի մոտիվացնում հատկապես տղա սովորողներին Օլիմպիադաներին, տարբեր մրցույթներին՝ Կենգուրու, Մեղու, Կորիզ, նախապատրաստելու համար խմբակների բացակայություն Բացօթյա կանաչ դասարանի առկայությունը կիսթանի հետաքրքրվածությունը կրթության հանդեպ, կձևավորի բնապահպանական կարողություններ
---	---

Է. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների զարգացումն ապահովվող միջոցառումներ

Ուժեղ կողմ	Թույլ կողմ
1. Մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրություն և կիրառում պրակտիկ աշխատանքում 2. Մասնագիտական, մանկավարժական, մեթոդական խորհրդակցությունների, խորհրդատվությունների կազմակերպում: 3. 2-րդ, 5-րդ, 7-րդ, 10-րդ դասարաններում ներդրվող նոր չափորոշիչների վերապատրաստումներին ուսուցիչների ակտիվ ներգրավվածությունը ոգևորիչ է 4. Մանկավարժության նորագույն նվաճումները ուսուցչին հասանելի դարձնելու գործիքակազմերի և մեխանիզմների մշակում: 5. Տարաբնույթ սեմինարների կազմակերպում, մանկավարժական նորագույն նվաճումների ներկայացմամբ բաց դասեր և քննարկումներ 6. Մեթոդական միավորումներում մանկավարժական ընթերցումներ և քննարկումներ 7. Որակավորման տարակարգ չունեցող, սկսնակ ուսուցիչներին ատեստավորման գործընթացի նախապատրաստում: 8. Յուրաքանչյուր տարի ուսուցչական անձնակազմի 20%-ի պարտադիր	Ուսուցիչների գերծանրաբեռնվածությունը թույլ չի տալիս առաջավոր փորձի ուսումնասիրության և կիրառման հաճախակի հնարավորություն Ուսուցիչների խրախուսման համար ֆինանսական սահմանափակ հնարավորությունները երբեմն հիասթափության պատճառ են դառնում ՏՀՏ կիրառման քիչ հնարավորություններ, ՄՄԱԸԹ գրատախտակի բացակայություն, համակարգչային թերբեռնվածություն

վերապատրաստման և ատեստավորման ենթակա ուսուցիչների համար վերապատրաստող լավագույն կազմակերպությունների ընտրություն: 9.Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացի ընդլայնում: 10.Կամավոր ատեստացիաներին ուսուցիչների ներգրավում, ինքնակրթություն: 11. <<Տարվա լավագույնները>> մրցույթին ուսուցիչների ներգրավում: 12.Կրթական այլ ծրագրերում և մրցույթներում ուսուցիչների ներգրավում: 13. Ուսուցչական համաժողովներում (հայկական և միջազգային) ուսուցիչների մասնակցություն: 14. Փոխադարձ դասալսումներ: 15. Առարկայական շաբաթների անցկացում, քննարկումներ 16.Լավագույն ուսուցիչները պարբերաբար ստանում են պատվոգրեր տնօրինության կողմից,մարզպետի կողմից	Պարտադիր ատեստավորման ենթակա ուսուցիչների համար վերապատրաստող լավագույն կազմակերպությունների ոչ ճիշտ ընտրություն Կամավոր ատեստավորման թեստերը հաղթահարելու վախ, անինքնավստահություն Մրցույթների անցկացման ընթացակարգերի վերաբերյալ ունեցած կարծրատիպեր Լաբորատորիաների, մասնագիտական դասասենյակների հազեցվածության Միջազգային վերապատրաստումների պակասի հետևանքով օտարերկրյա դպրոցների փորձի փոխանակման պակաս Որոշ առարկաների մասնագետների պակաս Ցանկալի է ուսուցիչների խրախուսման նյութական տարբերակը
---	---

Ը.Կրթության որակ	
Ուժեղ կողմ - Դպրոցը ունեցել է հեղինակություն - Լավագույն ավանդույթները պահպանվում են դպրոցում - Օտար լեզուներից ուսուցանվում են ռուսերեն, ֆրանսերեն և անգլերեն: - Կրթության որակի շարունակական բարելավում և գործնական գիտելիքների տրամադրում - Կրթության շարունակականության ապահովում - Ուսումնական գործընթացում համապատասխան տեխնոլոգիաների կիրառման, ուսուցման մեջ դասավանդման նոր մեթոդների ներդրման, պետական չափորոշիչներին համապատասխան կրթության ապահովման վերլուծություն ու գնահատում - Մասնագիտական կողմնորոշմանն ուղղված շարունակական աշխատանքներ: - Առաջին կարգի տարակարգ ունեցող ուսուցչի առկայություն 1 կամավոր ատեստավորված ուսուցիչ՝ 88 տոկոս արդյունքով, որի ցուցանիշը օրինակ է մյուս ուսուցիչներին, որոնք այս տարի շատ են/ 2	Թուլ կողմ - Դպրոցի հեղինակությունը այս պահին բավարար է - Լեզուների ուսումնասիրման համար անհրաժեշտ ուսումնականության բազայի պակասը դժվարեցնում է լեզուների խորությամբ ուսումնասիրումը: - Տարակարգ ունեցող ուսուցիչների քիչ թիվ - Խրախուսման ձևերի մշակում՝ դրամական , բարոյական, նյութատեխնիկական աջակցություն, գործուղումներ: - Հաստատությունում վճարովի հիմունքներով հանրակրթական և կամ մասնագիտական լրացուցիչ կրթական ծրագրերի, ինչպես նաև այլ ծառայությունների իրականացման բացակայությունը, երկարօրյա

դասվար, զինդեկ, հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, տեխնոլոգիայի ուսուցիչ, հասարակագիտության ուսուցիչ/ 10. Ինքնակրթությամբ զբաղվող, իրենց նախաձեռնությամբ վերապատրաստումների մասնկացող, տարբեր մրցույթների և օլիմպիադաներում հաջողություն գրանցած աշակերտներ ունեցող ուսուցիչները խրախուսվել են տնօրինության և մարզպետարանի կրթության բաժնի կողմից 11. Ուսուցիչները և աշակերտները աշխատում են և ստեղծում են էլեկտրոնային կրթական ռեսուրսներ 12. Այս պահին դպրոցում կա վերապատրաստող 3 ուսուցիչներ, որից. • ՀՊԶ-ի ներդրման վերապատրաստողներ- 2 ուսուցիչ • Նախագծային աշխատանք՝ 1 ուսուցիչ • 3 ուսուցիչ դիմել են նաև պարտադիր ատեստավորման վերապատրաստողների Վայքի կազմակերպություններ 13. Դպրոցի շրջանավարտները սովորում են ՀՀ տարբեր բուհերում: 14. Այս տարի 13 շրջանավարտներից 10-ը դիմել են ԲՈԻՀ/5-ը ստացել են բավականին բարձր	ուսուցման և խմբակների կազմակերպման բացակայությունը խոչընդոտում է կրթության որակի ապահովմանը Համակարգիչների և սմարթ գրատախտակի բացակայությունը խոչընդոտում է էլեկտրոնային դասերի հաճախակի անցկացմանը Մանկավարժական բուհում սովորողների պակաս քանակ, որի հետևանքով կա մասնագետ ուսուցիչների խնդիր Հաջողակ շրջանավարտների խորհրդի ստեղծումը օրինակ կարող է ծառայել Փորձի փոխանակման նպատակով պակասում են գործուղումները /ֆինանսական դժվարությունների պատճառով/ տարբեր մարզերի և մայրաքաղաքի , ինչու չէ նաև արտերկրի առաջատար դպրոցներ: Բարձր դասարանի տղաների կրթության հանդեպ անտարբերությունը վատ է անբաղաճում տարրական և միջին դպրոցում սովորող տղաների վրա, հատկապես պետք է ուշադրություն դարձնել և լինել հետևողական:
---	--

միավորներ/, 2-ը քոլեջ: 15. Դպրոցն ունի աշխարհի լավագույն բուհերում սովորող հաջողակ շրջանավարտներ/Գերմանիա, Ֆրանսիա, Կանադա/:	
--	--

Թ.Հաստատության կողմից օգտագործվող տեխնոլոգիաները և կիրառվող նորարարությունները	
Ուժեղ կողմ 1. Ուսուցիչներից շատերը վարում են հազեցած, ժամանակակից պահանջներին համապատասխանող տեղեկատվական տեխնոլոգիաներով դասեր: 2. Ուսուցիչները և աշակերտները իրենց աշխատանքները ներկայացնում են նորագույն տեխնոլոգիաներով՝ մասնավորապես թեմատիկ և գործնական աշխատանքները տրվում և ստուգվում են Google forms, docs, Teams, Moodle, Quizis, Padlet, Play Pozzit, LearningApps.Org և այլ հարթակներում: 3. Ուսուցիչները ունեն ստեղծած և տեղադրած էլեկտրոնային ռեսուրսներ ԴՇՏՀ կայքում: 4. Միջանցքներում տեղադրված են տեսախցիկներ , որոնք հնարավորություն են տալիս վերահսկել դպրոցի անցուղարձը: 6. Թումո հաճախող երեխաների ներուժը օգտագործվում է միջոցառումների, նախագծերի և հետազոտությունների իրականացման համար: 7. Դպրոցի անցուղարձը, կատարվող և կատարվելիք իրադարձությունները լուսաբանվում են	Թույլ կողմ 1. Համակարգչային կենտրոնի անլիարժեքությունը, Սմարթ գրատախտակի բացակայությունը, ուսուցիչների մի մասի՝ տեխնիկայի տիրապետման և նպատակային կիրառման հմտությունների պակասը թույլ չի տալիս ամբողջությամբ կիրառել տեխնոլոգիական նորարարությունները 2. Ինտերնետային խափանումների պատճառով ուսուցիչների աշխատանքը թերի է 3. Դպրոցի պաշտոնական կայքը պասիվ է վարման տեսանկյունից, կարիք կա թարմացման 4. Ինտերնետ կապի հզորացման դեպքում կարելի է վերականգնել <<Մեկ երեխա, մեկ համակարգիչ >> արդեն դադարեցված ծրագիրը, քանի որ աշակերտներից շատերը ունեն ծրագրի շրջանակում ստացած նվեր-գրասալիկներ:


<<Զառիթափի
կարողունակ
աշակերտներ >>
ֆեյսբուքյան կայքում:

8.Արտահերթ ծնողական ժողովները և
որոշ լրացուցիչ պարապմունքներ
կատարվում են օնլայն հարթակներով:

9.Աշակերտների մի մասը իրենց
հանձնարարված առաջադրանքները
ստեղծում են նորագույն
տեխնոլոգիաներով, որոնք էլ կրթական
ռեսուրս են հանդիսանում մնացյալ
աշակերտների համար:

10.Քիմիա առարկայից ունենք ներբեռնված
վիրտուալ լաբորատորա, որին հաճույքով
մասնակցում են աշակերտները:

11.Teams հարթակում ունենք ձևավորված
խմբեր,որոնք պարապում են կամավոր
ատեստավորման համար:



YOUTUBE.COM

Զառիթափի միջնակարգ դպրոցի աշակերտների Նախագծային աշխատանք

Ուսումնական նպատակով կատարված ծախսերի վերլուծությունը, դրանց արդյունավետության , ցուցանիշների շեղումների և պլանավորման խնդիրների տեսանկյունից

Աշխատանքի վարձատրություն և դրան հավասարեցված վճարումներ /այդ թվում՝ եկամտային հարկը/			Ծառայությունների և ապրանքների ձեռք բերման դիմաց վճարումներ			Դրամաշնորհներ և այլ տրանսֆերներ			Այլ ծախսեր			Դրամական և միջոցների տերեվերջի / հաշվետու ժամանակաշրջանի վերջի/ մնացորդը
Ծրագրային ցուցանիշը	Փաստացի /դրամարկդային/ ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	Ծրագրային ցուցանիշը	Փաստացի /դրամարկդային/ ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	Ծրագրային ցուցանիշը	Փաստացի /դրամարկդային/ ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	Ծրագրային ցուցանիշը	Փաստացի /դրամարկդային/ ցուցանիշը	Ծրագրային և փաստացի ցուցանիշների միջև շեղումը	
45580,00	45478.31	101.69	8033,07	6482,54	1550,53	0.0	0.0	0.0	150.0	138.63	11.4	1706.28

Ընդամենը գործառնական ծախսեր՝ 53763,07

Հաստատությունում առկա հիմնախնդիրները

Ոլորտ	Հիմնախնդիր
1. Ուսումնական ֆիզիկական միջավայր	1. Դպրոցական շենքային պայմանները, համապատասխանաբար նյութատեխնիկական բազայի բացակայությունը բացասաբար են ազդում ուսուցման գործընթացի կազմակերպման, որակյալ կրթության ապահովման վրա
2. Կառավարման և խորհրդակցական մարմիններ	2. Խորհուրդների պասիվ համագործակցությունը, խորհրդի անդամների կողմից նախաձեռնությունների պակասը բացասաբար են ազդում դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքների բնականոն գործունեության կազմակերպման և ներդպրոցական վերահսկողական մեխանիզմների կիրառման վրա
3. Աշակերտական համակազմ	4. Ուսման նկատմամբ մոտիվացիայի պակասը, նպատակասլացության, մասնակցային մշակույթի բացակայությունը բացասաբար է ազդում սովորողների ուսուցման ու դաստիարակության վրա
